ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

Նաիրի Ադամյանն ունի ավելի քան 10 տարվա աշխատանքային փորձ, այդ թվում՝ ավելի քան 7 տարի ղեկավար, կազմակերպման, վերահսկման և համակարգման գործառույթներ ունեցող պաշտոններում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային համակարգերի կառավարման ոլորտում:

2024 թվականի օգոստոսից զբաղեցնում է «Հայփոստ» ՓԲԸ գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և ֆինանսական ծառայությունների գծով:

2023 թվականի մարտից մինչև 2024 թվականի օգոստոսը աշխատել է «Հայաստանի Մանուկներ հիմնադրամ» (ՔՈԱՖ)-ում՝ որպես Լոռիի ՍՄԱՐԹ ավանի ենթակառուցվածքների ղեկավար և տնօրինության անդամ:

2017 թվականի սեպտեմբերից մինչև 2023 թվականի մարտը աշխատել է «Ինեկո Գրուպ» ՓԲԸ կազմում գտնվող «Ինեկոբանկ» ՓԲԸ և «Հայվեյ» ՓԲԸ ընկերություններում՝ զբաղեցնելով թվային բանկային պրոդուկտների մշակման և տեխնոլոգիական զարգացման ոլորտներում պատասխանատու պաշտոններ:

Աշխատանքային պարտականությունների շրջանակում իրականացրել է ՀՀ-ում առաջատար թվային բանկային ծառայությունների մշակման և ներդրման համակարգում, վճարային և ֆինանսական տեխնոլոգիական լուծումների ներդրում, պրոդուկտների պորտֆելների ռազմավարական կառավարում, տեխնիկական և բիզնես ստորաբաժանումների աշխատանքների համադրում, ինչպես նաև կարգավորիչ պահանջների կիրարկման ապահովում:

Մասնագիտական գործունեության հիմնական ուղղվածությունն է՝ թվային համակարգերի ռազմավարական պլանավորումը, տեխնիկական պրոդուկտների պորտֆելների կառավարումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման մոդելների մշակումը, բիզնես գործընթացների քարտեզագրումը և համակարգային ճարտարապետության ձևավորումը, ինչպես նաև միջգերատեսչական և բազմաշերտ համակարգերի համադրումը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2009 2013 թվականներին սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի Կառավարման ֆակուլտետը՝ ստանալով բակալավրի աստիճան:

2015–2017 թվականներին շարունակել է ուսումը նույն համալսարանում՝ Ինովացիաների կառավարման մասնագիտությամբ և ստացել մագիստրոսի աստիճան:

Նաիրի Ադամյանը զինապարտ է, ծառայել է Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում 2013–2015 թվականներին: Ամուսնացած չէ: